

1.3. ԳՆԵՐ ԵՎ ՄԱԿԱԳՆԵՐ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սպառողական շուկայում 2017թ. մարտին 2016թ. դեկտեմբերի նկատմամբ, ինչպես և նախորդ երկու ամիսներին, արձանագրվել է գնաճ: Սպառողական գների ընդհանուր մակարդակի փոփոխությունը պայմանավորված է պարենային ապրանքների գների փոփոխությամբ՝ կապված պարենային որոշ ապրանքատեսակների գների սեզոնայության, սպառման կառուցվածքի, պահանջարկի և առաջարկի հարաբերակցության փոփոխության հետ:

Գների և սակագների փոփոխություններն, ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների 2017թ. հունվար-մարտին

2017թ.	Սպառողական գների ինդեքս ¹⁾	/տոկոսներով՝ նախորդ ամսվա նկատմամբ/				
		Սղաճը 2016թ. դեկտեմբերի նկատմամբ	Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս ²⁾	Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս ³⁾	Արտահանման միջին գների (միավորի արժեքի) ինդեքս ⁴⁾	Ներմուծման միջին գների (միավորի արժեքի) ինդեքս ⁴⁾
Հունվար	101.8	101.8	96.7	102.3	102.4	100.8
Փետրվար	99.5	101.3	103.5	99.9	103.0	101.5
Մարտ	99.2	100.6	96.9	98.6	97.9	100.1
2017թ. հունվար-մարտը	98.8	-	118.3	100.3	102.2	95.7

¹⁾ Ըստ գործող մեթոդաբանության՝ ԼՂՀ-ում գների դիտարկումը կատարվում է յուրաքանչյուր ամսվա 1-ին, 10-ին և 20-ին մոտ ընկած ժամանակահատվածում, հանրապետության 7 բնակավայրերում՝ 417 անվանում ապրանք-ծառայությունների գծով:

²⁾ ԼՂՀ արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսի հաշվարկն իրականացվում է ըստ Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի (ՏԳՏԴ) խմբագրություն 2-ի: Գների դիտարկումը կատարվում է արդյունաբերական ոլորտի 55 բազային ձեռնարկություններում՝ 62 անվանում արտադրանք-ներկայացուցիչների գծով:

³⁾ Ըստ գյուղացիական տնտեսությունների կողմից իրացված 34 անվանում գյուղմթերքի իրացման գների և ծավալների հետազոտման տվյալների:

⁴⁾ Ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում սպառողական գների ինդեքսների հաշվարկման համար սպառողական ապրանքների և ծառայությունների կազմի ու կառուցվածքի (տեսակարար կշիռների) վերանայման ու բազիսային տարվա փոփոխության մասին

Համաձայն սպառողական գների ինդեքսների (ՍԳ-ի) հաշվարկման մեթոդաբանության (Ձեռնարկի¹⁾ պահանջների սպառողական գների ինդեքսների հաշվարկման համար կիրառվող սպառողական ապրանքների և ծառայությունների տեսակարար կշիռները և ինդեքսների հաշվարկման համար հիմք ընդունված բազիսային տարին պետք է պարբերաբար ենթարկվի վերանայման, ըստ տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված (ընտրանքային) հետազոտության արդյունքների: 2017 թվականի հունվարից սկսած ԼՂՀ-ում ՍԳ-ի հաշվարկման համար բազիսային ժամանակաշրջան է ընդունվում 2016 թվականի դեկտեմբեր ամիսը: Կատարվել է սպառողական զամբյուղում ընդգրկված ապրանք (ծառայություն)-ներկայացուցիչների տեսակարար կշիռների հաշվարկ, հաշվի առնելով ԼՂՀ-ում 2015թ. հոկտեմբեր-2016թ. սեպտեմբեր ժամանակահատվածում իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված (ընտրանքային) հետազոտության արդյունքները և 2015թ. հոկտեմբերից 2016թ. դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում ԼՂՀ-ում դիտարկվող յուրաքանչյուր ապրանք-ծառայության գնային փոփոխությունները:

Հաշվի առնելով ՍԳ-ի հաշվարկման միջազգային փորձը, որտեղ ներկայում առաջնայությունը տրվում է ՍԳ-ի զամբյուղի տեսակարար կշիռների առավել հաճախակի վերանայմանը (առավել ընդունելի տարբերակ է համարվում ամեն տարի կշիռների վերանայումը, եթե տվյալ երկիրն ունի այդպիսի հնարավորություն) ԼՂՀ-ում ՍԳ-ի հաշվարկման համար կշիռների վերանայումն այսուհետ իրականացվելու է ամեն տարի՝ բազիսային ժամանակաշրջան ընդունելով նախորդ տարվա դեկտեմբեր ամիսը:


ՍԳ-ի հաշվարկման համար դիտարկվող ապրանք-ծառայությունների ընդհանուր քանակը մնացել է անփոփոխ՝ 417, միաժամանակ կատարվել է ԼՂՀ հետազոտվող 6 բնակավայրերի և Ստեփանակերտ քաղաքի տեսակարար կշիռների վերահաշվարկ՝ հիմք ընդունելով 2016 թվականին փաստագրված մշտական բնակչության թվաքանակի, ապրանքաշրջանառության և ծառայությունների ծավալների մասին շրջանային ցուցանիշները:

Սպառողական գների ինդեքսների հաշվարկման նշված մեթոդաբանական փոփոխություններով պայմանավորված, 2017թ. հունվար-փետրվար ամիսների գների ինդեքսները վերահաշվարկվել են:

¹⁾ ILO/IMF/OECD/Eurostat/The World Bank
Consumer price index manual: Theory and Practice
 Geneva, International Labour Office, 2004
 Guide, Consumer price index, data collecting, statistical method, calculation, methodology, developed country, developing country.

Գների, սակագների աճի տեմպերը 2016-2017թթ. հունվար-մարտին

(նախորդ տարվա հունվար-մարտի նկատմամբ,%)



Գների փոփոխություններն ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների, 2017թ.

(նախորդ տարվա նկատմամբ,%)

2017 թվականի			
	հունվար	փետրվար	մարտ
Սպառողական գների ինդեքս	101.5	101.0	100.3
Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս	103.8	107.4	104.1
Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս	105.9	105.7	104.2
Արտահանման միջին գների (միավորի արժեքի) ինդեքս ¹⁾	106.0	109.2	106.9
Ներմուծման միջին գների (միավորի արժեքի) ինդեքս ¹⁾	112.0	113.7	113.9

¹⁾ Ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների


ԱՐՏԱՐԺՈՒԹՎՅԻՆ ՇՈՒԿԱ:

ԼՂՀ սպառողական գների ինդեքսի, ԱՄՆ դոլարի և Եվրոյի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքների փոփոխությունները 2017թ. հունվար-մարտին

(%)

	հունվար	փետրվար	մարտ
Սպառողական գների ինդեքս			
2016թ. դեկտեմբերի նկատմամբ	101.8	101.3	100.6
նախորդ ամսվա նկատմամբ	101.8	99.5	99.2
նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ	98.8	99.1	98.5
ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքը			
2016թ. դեկտեմբերի նկատմամբ	100,7	100,8	100,4
նախորդ ամսվա նկատմամբ	100,7	100,1	99,7
նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ	100,0	98,6	99,7
Եվրոյի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքը			
2016թ. դեկտեմբերի նկատմամբ	101,7	101,6	101,7
նախորդ ամսվա նկատմամբ	101,7	99,9	100,1
նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ	98,0	94,5	95,9
ՌԴ ռուբլու նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքը			
2016թ. դեկտեմբերի նկատմամբ	104,5	106,8	107,4
նախորդ ամսվա նկատմամբ	104,5	102,2	100,6
նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ	130,6	130,2	120,7

ԼՂՀ սպառողական գների ինդեքսի, ԱՄՆ դոլարի, Եվրոյի և ռուսական ռուբլու նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքների փոփոխությունները 2016-2017թթ. հունվար-մարտին, տոկոսներով (նախորդ տարվա դեկտեմբերը = 100.0)



2017թ. մարտին 2016թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների 0.6 տոկոս աճի պայմաններում գրանցվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 0.4 տոկոս աճ, այն դեպքում, երբ նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածում 0.7 տոկոս գների աճի պայմաններում գրանցվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 0.7 տոկոս աճ:

ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքը 2016թ. մարտին կազմել է 486.3 դրամ, իսկ ընթացիկ տարվա մարտին ` 484.8 դրամ:

ՄՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում 2017թ. մարտին 2016թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 100.6 տոկոս:


Սպառողական գների փոփոխությունները 2017թ. մարտին

(%)

	2017թ. մարտը			2017թ. հունվար-մարտը 2016թ. հունվար-մարտի նկատմամբ
	2017թ. փետրվարի նկատմամբ	2016թ. մարտի նկատմամբ	2016թ. դեկտեմբերի նկատմամբ	
Սպառողական գների ինդեքս	99.2	98.5	100.6	98.8
<i>այդ թվում`</i>				
պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	98.5	99.7	102.3	100.3
ոչ պարենային ապրանքների	99.9	96.7	99.5	96.6
ծառայությունների	100.2	97.5	98.2	97.7

Սպառողական գների ինդեքսի հավելյալ տեմպը 2007-2017թթ. մարտին

(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %)



Սպառողական գների ինդեքսը 2016-2017թթ. հունվար-մարտին

(%)


	Ընդամենը		այդ թվում`					
	նախորդ ամսվա նկատ- մամբ	նախորդ տարվա դեկտեմ- բերի նկատմամբ	Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)		Ոչ պարենային ապրանքներ		Բնակչությանը մատուցված ծառայություններ	
			նախորդ ամսվա նկատմամբ	նախորդ տարվա դեկտեմ- բերի նկատմամբ	նախորդ ամսվա նկատմամբ	նախորդ տարվա դեկտեմ- բերի նկատմամբ	նախորդ ամսվա նկատմամբ	նախորդ տարվա դեկտեմ- բերի նկատմամբ
2016թ.								
Հունվար	101.6	101.6	103.1	103.1	99.8	99.8	100.3	100.3
Փետրվար	99.2	100.8	98.7	101.7	99.7	99.5	99.9	100.1
Մարտ	99.9	100.7	99.9	101.6	99.8	99.3	100.1	100.2
I եռամսյակ	100.7*	x	101.6*	x	99.3*	x	100.2*	x

	Ընդամենը		այդ թվում՝					
	նախորդ ամսվա նկատմամբ	նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ	Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)		Ոչ պարենային ապրանքներ		Բնակչությանը մատուցված ծառայություններ	
			նախորդ ամսվա նկատմամբ	նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ	նախորդ ամսվա նկատմամբ	նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ	նախորդ ամսվա նկատմամբ	նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
2017թ.								
Հունվար	101.8	101.8	104.3	104.3	99.5	99.5	99.0	99.0
Փետրվար	99.5	101.3	99.6	103.9	100.0	99.6	98.9	98.0
Մարտ	99.2	100.6	98.5	102.3	99.9	99.5	100.2	98.2
I եռամսյակ	100.6*	x	102.3*	x	99.5*	x	98.2*	x

*) Եռամսյակի վերջին ամիսը՝ նախորդ եռամսյակի վերջին ամսվա նկատմամբ

2017թ. մարտին նախորդ ամսվա համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 99.2 տոկոս, այդ թվում պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 98.5 տոկոս, ոչ պարենային ապրանքներինը՝ 99.9, ծառայությունների սակագներինը՝ 100.2 տոկոս:

ԼՂՀ սպառողական շուկայում պարենային, ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2017թ. հունվար-մարտին, տոկոսներով (նախորդ տարվա դեկտեմբերը = 100.0)



Սպառողական գների ինդեքսը 2017թ. մարտին 2016թ. մարտի համեմատ կազմել է 98.5 տոկոս՝ նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի 98.6 տոկոսի դիմաց: Նշված ամսում պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների ինդեքսը կազմել է 99.7 տոկոս, ոչ պարենային ապրանքներինը՝ 96.7, իսկ վճարովի ծառայությունների սակագներինը՝ 97.5 տոկոս:

Գների միջին ամսական տղաճը 2016-2017թթ. հունվար-մարտին ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների

	/տոկոսներով/	
	2016թ. հունվար-մարտ	2017թ. հունվար-մարտ
Սպառողական գների ինդեքս	0.2	0.2
<i>այդ թվում՝</i>		
պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	0.6	0.8
ոչ պարենային ապրանքների	-0.2	-0.2
ծառայությունների	0.1	-0.6
Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս	-4.8	-1.0
Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս	0.9	0.3

2017թ. հունվար-մարտին նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 98.8 տոկոս, այդ թվում պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 100.3 տոկոս, ոչ պարենային ապրանքներինը՝ 96.6, ծառայությունների սակագներինը՝ 97.7 տոկոս, իսկ նախորդ տարվա հունվար-մարտին 2015թ. նույն ժամանակահատվածի համեմատ՝ համապատասխանաբար 99.0 տոկոս, 97.4, 100.7 և 100.5 տոկոս:

ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ: Պարենային ապրանքների շուկայում (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) 2017թ. մարտին, նախորդ ամսվա համեմատ, գրանցվել է 1.5 տոկոս գնանկում :

Պարենային ապրանքների ընդհանուր գնաճը 2017թ. առաջին եռամսյակում կազմել է 0.8 տոկոս, այդ

թվում հունվարին՝ 4.3 տոկոս, փետրվարին՝ -0.4, իսկ մարտին՝ -1.5 տոկոս:

*Առանձին պարենային ապրանքախմբերի գների փոփոխությունները
2017թ. հունվար-մարտին*

/տոկոսներով/

	2017թ.					հունվար-մարտը 2016թ. հունվար- մարտի նկատմամբ
	հունվարը	փետրվարը	մարտը	մարտը		
	2017թ. դեկտեմբերի նկատմամբ			2017թ. փետրվարի նկատմամբ	2016թ. մարտի նկատմամբ	
Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	104.3	103.9	102.3	98.5	99.7	100.3
Պարենային ապրանքներ հացամթերք	104.8	104.3	102.5	98.3	99.6	100.3
մսամթերք	98.6	97.6	97.0	99.4	95.2	95.6
ծկնամթերք	100.0	101.3	102.6	101.4	102.8	101.7
կաթնամթերք	99.1	99.8	103.5	103.7	99.4	97.4
ծու	100.1	100.2	99.3	99.1	100.4	100.4
կենդանական և բուսական յուղ	98.8	96.0	94.5	98.5	103.9	102.0
միրգ	100.1	99.8	99.6	99.8	98.3	98.2
բանջարեղեն և կարտոֆիլ	105.4	107.6	108.6	100.9	99.8	98.9
շաքարավազ	134.5	130.1	115.9	89.1	98.9	105.2
սուրճ, թեյ, կակաո	100.7	101.1	101.6	100.5	115.1	114.9
հրուշակեղեն	99.9	99.7	99.9	100.2	97.6	97.6
այլ մթերք	100.6	100.5	100.4	99.9	98.4	98.3
ոչ ոգելից խմիչք	100.0	100.2	100.1	99.9	96.8	96.8
ոչ ոգելից խմիչք և ծխախոտ	100.0	99.9	99.7	99.8	99.8	100.0
ոգելից խմիչք և ծխախոտ	100.2	100.2	100.1	99.9	100.6	100.8

*Պարենային մի խումբ ապրանքատեսակների միջին հանրապետական գները 2016-2017թթ.
առաջին եռամսյակում*

/դրամ/

	չափի միավորը	2016թ.			2017թ.		
		հունվար	փետրվար	մարտ	հունվար	փետրվար	մարտ
Միս տավարի	կգ	2236.6	2247.8	2277.6	2293.4	2348.0	2402.5
Միս խոզի	կգ	3631.8	3572.8	3424.2	2763.6	2775.0	2813.6
Թարմ կաթ	լ	304.1	304.1	300.4	301.5	301.1	301.1
Պանիր	կգ	1808.5	1776.2	1708.1	1761.4	1766.8	1705.0
Բուսական յուղ	լ	816.6	818.1	816.5	792.8	787.2	784.0
Չու	տասնյակ	727.8	708.1	677.8	736.4	714.5	703.1
Հաց	կգ	425.4	427.4	424.8	391.9	386.5	383.4
Մակարոն, վերմիշել	կգ	514.7	500.0	520.4	422.6	426.2	427.1
Շաքարավազ	կգ	389.4	391.1	392.1	442.6	444.2	446.5
Բրինձ	կգ	612.2	609.9	615.5	632.0	611.8	611.7
Կարտոֆիլ	կգ	248.9	246.4	242.7	223.6	240.0	236.3
Թարմ կաղամբ	կգ	194.3	178.9	184.5	167.6	183.5	200.1
Գլուխ սոխ	կգ	292.4	295.5	302.1	272.7	287.6	296.0
Գազար	կգ	344.2	414.9	418.8	306.2	316.8	339.8
Խնձոր	կգ	455.2	441.1	421.1	637.5	648.1	636.3
Թեյ	կգ	7166.7	7268.6	7313.5	7141.4	7128.2	7151.3
Սուրճ	կգ	3986.5	3986.5	3976.5	3875.1	3865.5	3871.0

ՈՉ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ: 2017թ. մարտին նախորդ ամսվա համեմատ ոչ պարենային ապրանքների գները նվազել են 0.1 տոկոսով: 2017թ. մարտին փետրվարի համեմատ հանրապետությունում գրանցվել է բենզինի և դիզելային վառելիքի գների 3.5-ական տոկոս գնաճ:

2017թ. մարտին դեկտեմբերի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում գրանցվել է 0.5 տոկոս գնանկում:

Բենզինի և դիզելային վառելիքի գների փոփոխությունը 2017թ.

/տոկոսներով/

	2017թ.					
	հունվարը	փետրվարը	մարտը	մարտը		
	նախորդ ամսվա նկատմամբ			2016թ. մարտի նկատմամբ	2016թ. դեկտեմբերի նկատմամբ	հունվար-մարտը 2016թ. հունվար-մարտի նկատմամբ
Բենզին	96.1	106.5	103.5	98.2	105.9	91.5
Դիզելային վառելիք	100.0	105.0	103.5	105.0	108.7	92.9

Ոչ պարենային ապրանքների հիմնական ապրանքախմբերի գների փոփոխությունը

/տոկոսներով/

	2017թ.					հունվար-մարտը 2016թ. հունվար- մարտի նկատմամբ
	հունվարը	փետրվարը	մարտը	մարտը		
	2016թ. դեկտեմբերի նկատմամբ			2017թ. փետրվարի նկատմամբ	2016թ. մարտի նկատմամբ	
Ոչ պարենային ապրանքներ այդ թվում՝	99.5	99.6	99.5	99.9	96.7	96.6
հագուստեղեն, գործվածք	99.8	99.4	99.3	99.9	96.6	97.7
կոշիկեղեն	99.8	99.6	99.5	99.9	96.9	96.8
վառելիք	99.3	99.3	99.2	99.9	97.7	97.8
կահույք	99.5	99.5	99.5	100.0	99.3	99.3
գորգեղեն	100.0	100.0	100.0	100.0	101.6	101.6
տեքստիլեղեն	99.5	99.5	99.6	100.1	99.6	99.6
կենցաղ. էլեկտրաապրանքներ	100.3	101.2	101.2	100.0	98.2	97.9
խոհանոցային սպասք	100.5	100.8	101.0	100.2	100.9	100.7
վիագող միջոցներ	99.9	99.4	99.0	99.6	93.3	93.7
շինանյութեր	100.0	99.8	99.5	99.8	97.9	99.3
դեղամիջոցներ	99.1	99.4	99.0	99.6	97.8	97.9
անձնական օգտագործման մեքենաներ և բեմզին	99.1	99.8	100.7	100.9	96.2	94.0
մշակույթի ապրանքներ	100.1	99.9	97.6	97.7	97.5	98.7
գրենական պիտույքներ	99.8	99.8	99.7	99.9	98.6	98.7
գեղահարդարման ապրանքներ	99.8	99.0	98.6	99.7	95.8	96.4
ոսկերչական ապրանքներ	100.0	100.0	99.9	100.0	101.2	101.2
անձնապիտո ապրանքներ	99.7	99.4	98.7	99.4	96.2	96.7

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Հաշվետու տարվա մարտին 2016թ. դեկտեմբերի համեմատ բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում արձանագրվել է սակագների 1.8 տոկոս գնանկում նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի 0.2 տոկոս աճի փոխարեն:

2017թ. մարտին նախորդ ամսվա համեմատ ծառայությունների սակագները կազմել են 100.2 տոկոս, որը հիմնականում պայմանավորված է տրանսպորտի ծառայությունների սակագների 1.9 տոկոս գնաճով:

2017թ. հունվար-մարտին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսը կազմել է 97.7 տոկոս:


Բնակչությանը մատուցված ծառայությունների հիմնական տեսակների սակագների փոփոխությունները

/տոկոսներով/

	2017թ.					հունվար-մարտը 2016թ. հունվար- մարտի նկատմամբ
	հունվարը	փետրվարը	մարտը	մարտը		
	2016թ. դեկտեմբերի նկատմամբ			2017թ. փետրվարի նկատմամբ	2016թ. մարտի նկատմամբ	
Ծառայություններ, ընդամենը այդ թվում՝	99.0	98.0	98.2	100.2	97.5	97.7
կենցաղային	99.9	99.9	99.9	100.0	99.9	99.9
բնակարանային-կոմունալ	98.0	98.0	98.0	100.0	95.7	95.7
բուժսպասարկման	100.1	99.9	99.9	100.0	100.0	100.2
տրանսպորտի	98.1	100.7	102.6	101.9	100.7	98.5
կապի	100.0	93.8	93.8	100.0	94.9	97.0
մշակույթի	100.0	101.2	101.2	100.0	101.2	100.8
կրթության	100.0	100.0	100.0	100.0	106.2	106.2
հանգստի	99.5	99.4	101.6	102.2	99.9	98.5
հանրային սննդի	100.5	100.9	100.9	100.0	100.2	100.4
իրավական և բանկային	100.0	100.0	100.0	100.0	101.0	101.0

Ծառայությունների հիմնական տեսակների սակագների փոփոխությունները 2017թ. մարտին

(2016թ. մարտի նկատմամբ, %)



ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

Սպառման ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսը 2017թ. մարտին, ըստ դիտարկված քաղաքների և ապրանքախմբերի

/ նախորդ ամսվա նկատմամբ /


	Սպառողական գների ինդեքս	սպառման ապրանքների	այդ թվում՝			բնակչությանը մատուցված ծառայությունների
			դրանցից՝		նշ պարենային ապրանքների	
			պարենային ապրանքների /ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ/	որից՝ պարենային ապրանքների		
Ընդամենը ԼՂՀ-ում այդ թվում՝	99.2	98.9	98.5	98.3	99.9	100.2
Ստեփանակերտ	98.9	98.3	97.8	97.5	99.9	100.4
Ասկերան	98.9	98.5	98.2	98.1	99.4	100.0
Հաղրուք	100.3	100.4	100.6	100.6	99.9	100.0
Մարտակերտ	99.8	99.7	99.5	99.5	100.2	100.0
Մարտունի	99.9	99.8	99.7	99.6	100.2	100.0
Շուշի	99.5	99.3	98.9	98.8	100.0	100.0
Բերձոր	99.9	99.9	99.7	99.7	100.4	100.0

Սպառման ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսը 2017թ. մարտին 2016թ. դեկտեմբերի համեմատ ըստ դիտարկված քաղաքների և ապրանքախմբերի

/տոկոսներով/

	Սպառողական գների ինդեքս	սպառման ապրանքների	այդ թվում՝			բնակչությանը մատուցված ծառայությունների
			դրանցից՝		նշ պարենային ապրանքների	
			պարենային ապրանքների /ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ/	որից՝ պարենային ապրանքների		
Ընդամենը ԼՂՀ-ում այդ թվում՝	100.6	101.5	102.3	102.5	99.5	98.2
Ստեփանակերտ	100.4	101.2	102.1	102.3	99.1	98.4
Ասկերան	100.6	101.7	102.7	103.0	99.4	97.9
Հաղրուք	101.6	103.0	103.9	104.3	100.7	97.9
Մարտակերտ	100.1	100.9	101.2	101.3	100.2	98.0
Մարտունի	101.3	102.5	103.5	103.8	100.3	98.1
Շուշի	99.7	100.4	100.6	100.7	99.8	98.0
Բերձոր	100.7	101.9	102.7	102.9	99.9	97.9

Սպառողական գների ինդեքսը 2017թ. մարտին ըստ դիտարկված քաղաքների
(2016թ. մարտի նկատմամբ, %)



Որոշ ոչ պարենային ապրանքախմբերի գների փոփոխություններն
ըստ դիտարկվող քաղաքների, 2017թ. մարտին

(2016թ. դեկտեմբերի նկատմամբ, %)

	հազուստ և գործվածք	կոշկե- ղեն	վառելիք	դեղա- միջոցներ	կենցաղային էլեկտրա- ապրանքներ	մշակույթի ապրանք- ներ	գրենական պիտույք- ներ	գեղատա- րարման ապրանքներ
Լ.Ղ.Հ. ընդամենը այդ թվում՝	99.3	99.5	99.2	99.0	101.2	97.6	99.7	98.6
Ստեփանակերտ	98.6	99.4	100.0	99.1	102.3	98.0	99.2	98.1
Ասկերան	102.2	98.4	99.2	95.3	98.6	94.0	98.9	100.0
Հաղրուք	99.6	99.8	100.0	100.0	99.7	96.6	100.0	100.0
Մարտակերտ	99.8	99.7	94.5	100.0	100.0	98.6	100.0	97.9
Մարտունի	100.0	100.0	98.3	100.0	100.0	96.6	100.0	100.0
Շուշի	99.7	99.4	99.6	98.3	100.1	97.1	108.2	97.1
Բերձոր	100.0	100.0	100.0	98.8	100.0	100.0	100.0	100.0

Կարևորագույն պարենային ապրանքների միջին գները 2016թ. ապրիլի 1-ի և 2017թ. մարտի 31-ի դրությամբ,
ըստ հանրապետության հետագոտված քաղաքների

/դրամ՝ կգ-ի համար/


	միս տա- վարի	պանիր	կարագ	բուսա- կան յուղ, լիտր	ձու, տաս- նյակ	շաքա- րավազ	կարտո- ֆիլ	գլուխ սոխ	կա- ղամբ	խնձոր
2016թ.										
Լ.Ղ.Հ. ընդամենը այդ թվում՝	2315.8	1656.2	4216.3	811.5	657.8	391.8	241.6	306.3	189.9	428.7
Ստեփանակերտ	2287.5	1600.0	4021.4	807.1	656.3	384.3	240.0	293.1	194.4	437.5
Ասկերան	2500.0	2000.0	4583.3	770.0	700.0	395.0	250.0	300.0	163.3	400.0
Հաղրուք	2300.0	1500.0	4416.5	850.0	700.0	410.0	250.0	350.0	200.0	500.0
Մարտակերտ	2200.0	2033.3	4575.0	800.0	600.0	400.0	250.0	325.0	200.0	470.0
Մարտունի	2533.3	1500.0	4250.0	850.0	633.3	400.0	233.3	333.3	156.7	300.0
Շուշի	2500.0	1800.0	4562.5	850.0	700.0	430.0	250.0	325.0	200.0	400.0
Բերձոր	2000.0	1500.0	4833.3	800.0	700.0	400.0	233.3	316.7	216.7	500.0
2017թ.										
Լ.Ղ.Հ. ընդամենը այդ թվում՝	2446.5	1679.1	4154.7	781.8	693.5	448.8	235.4	301.5	203.8	621.5
Ստեփանակերտ	2437.5	1627.8	4042.9	781.6	687.5	440.0	234.4	288.1	187.0	654.2
Ասկերան	2500.0	2200.0	4500.0	700.0	700.0	472.0	206.7	287.0	207.5	525.0
Հաղրուք	2500.0	1500.0	4200.0	850.0	700.0	480.0	250.0	350.0	250.0	600.0
Մարտակերտ	2500.0	1933.3	4250.0	733.3	700.0	450.0	225.0	350.0	250.0	575.0
Մարտունի	2500.0	1500.0	4216.7	816.7	700.0	450.0	263.3	326.7	226.7	600.0

	միս տա- վարի	պանիր	կարագ	բուսա- կան յուղ, լիտր	ձու, տաս- նյակ	շաքա- րավազ	կարտո- ֆիլ	գլուխ տխ	կա- ղամբ	խնձոր
Շուշի	2400.0	1800.0	4375.0	850.0	725.0	460.5	225.0	250.0	200.0	600.0
Բերձոր	2200.0	1566.7	4416.7	800.0	700.0	466.7	233.3	300.0	200.0	566.7

Վերը նշված պարենային ապրանքների ընդհանուր արժեքը (յուրաքանչյուրից 1 կգ-ի, ձվի՝ տասնյակի հաշվարկով) 2017 թ. մարտի 31-ի դրությամբ հանրապետությունում միջին հաշվով կազմել է 11566.6 դրամ, ինչը 3.1 տոկոսով բարձր է նույնամուն ապրանքատեսակների նախորդ տարվա ապրիլի 1-ին արձանագրված ընդհանուր արժեքից (11215.9 դրամ): Դիտարկված քաղաքներում վերոհիշյալ ապրանքների ձեռքբերման ամենացածր արժեքն արձանագրվել է Ստեփանակերտում (11381.0 դրամ):

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԻ ԱՐՏԱՊՐԱՆՔԻ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍ: 2017թ. մարտին փետրվարի համեմատ արդյունաբերական ձեռնարկությունների թողարկած արտադրանքի գների ինդեքսը կազմել է 96.9 տոկոս:

ԼՂՀ սպառողական գների ինդեքսի և արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսի փոփոխությունները 2016-2017թթ. հունվար-մարտին՝ ըստ ամիսների տոկոսներով (նախորդ ամիսը =100.0)



Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսները ըստ տնտեսության գործունեության տեսակների 2017թ. հունվար-մարտին

	2017թ. մարտը 2017թ. փետրվարի նկատմամբ	2017թ. հունվար-մարտը 2016թ. հունվար-մարտի նկատմամբ	2017թ մարտը 2016թ. դեկտեմբերի նկատմամբ (%)
Անրողջ արդյունաբերությունը այդ թվում	96.9	118.3	96.9
Հանքագործական արդյունաբերություն	88.4	197.4	90.0
Մշակող արդյունաբերություն	102.5	101.6	102.0
Էլեկտրաէներգիայի, գազի, զոլորշու և լավորակ օդի մատակարարում	100.4	95.9	99.1
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերանշակում	99.0	101.7	98.0

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ԻՐԱՅՄԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍ: 2017թ. մարտին նախորդ ամսվա համեմատ գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքսը կազմել է 98.6 տոկոս:

2017թ. մարտին 2016թ. մարտի համեմատ գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքսը կազմել է 100.8 տոկոս:

2017թ. հունվար-մարտին նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքսը կազմել է 100.3 տոկոս՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 99.7 տոկոսի դիմաց:

Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքսը ԼՂՀ-ում ըստ շրջանների

	2017թ. մարտը 2017թ. փետրվարի նկատմամբ	2017թ. հունվար-մարտը 2016թ. հունվար- մարտի նկատմամբ	2017թ. մարտը 2016թ. դեկտեմբերի նկատմամբ /տոկոս/
Ընդամենը ԼՂՀ-ում այդ թվում՝	98.6	100.3	100.9
Ստեփանակերտ	94.7	100.8	95.4

ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	2017թ. մարտը 2017թ. փետրվարի նկատմամբ	2017թ. հունվար-մարտը 2016թ. հունվար- մարտի նկատմամբ	2017թ. մարտը 2016թ. դեկտեմբերի նկատմամբ
Ասկերան	98.2	100.4	100.6
Հաղրուք	99.3	100.2	101.1
Մարտակերտ	98.0	100.5	103.6
Մարտունի	98.7	100.1	100.3
Շահումյան	99.6	100.0	102.3
Շուշի	99.4	100.1	100.9
Քաշաթաղ	99.0	100.4	100.3

2017թ. մարտ ամսվա գյուղատնտեսական մթերքների իրացման
միջին գները ըստ շրջանների

/դրամ/

Մթերքների անվանումը	Չափման միավորը	Ստե- փանա- կերտ	Ասկե- րան	Հաղ- րուք	Մար- տա- կերտ	Մարտու- նի	Շահում- յան	Շուշի	Քաշա- թաղ
բանջարեղեն միս (կենդանի քաշով)	կգ	1000.0	950.0	1000.0	-	998.5	1000.0	995.0	925.0
կաթ	“-”	1437.5	1433.0	1434.0	1430.0	1432.5	1427.5	1435.0	1427.5
ձու	լ	220.0	220.0	218.0	215.0	215.0	210.0	215.0	210.0
	տասնյակ	700.0	700.0	700.0	675.0	650.0	700.0	725.0	700.0

Գյուղմթերքների իրացման գների ինդեքսը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում 2017 թվականի
հունվար-մարտին ըստ ամիսների (դեկտեմբեր 2016=100.0)

